

ИСТОРИЯ

Արցախի կրթական կյանքի արտացոլումը «Մեղու Հայաստանի» պարբերականի էջերում (19-րդ դարի երկրորդ կես)

Հարությունյան Մարինե Գ.

պ.գ.թ., ավագ գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0000-1746-8708>

marina-arutunyan@mail.ru

ՀՏԳ 070(091):373(091); EDN: HPAAJU

DOI: 10.58587/18292437-2024.4-52

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ ծխական դպրոց, թեմական դպրոց, ռեալական ուսումնարան, Ամարասի վանք, Շուշի, Գանձասարի վանական դպրոցը, օրհորդաց դպրոց, պարբերական, կրթություն

Отражение образовательной жизни Арцаха на страницах периодического издания «Мегу Айастан» (вторая половина XIX века)

Арутюнян Марине Г.

к.и.н, старший научный сотрудник, Институт истории НАН РА (Ереван, РА)

Аннотация: Подводя итоги нашего научного исследования, хотела бы подчеркнуть, что в периодическом издании «Мегу Айастан» была представлена интересная информация о школе монастыря Амарас, духовных ученых монастыря. В нем подробно освещалась деятельность Мариамянской женской школы и Епархиальной школы в Шуши. Издание в общих чертах отметило деятельность епархиальных, церковно-приходских, мужских, женских, одноклассных, двухклассных, двухполых школ Арцаха, высоко оценило их роль в процессе развития армянской образовательной и культурной жизни.

Освещая деятельность отдельных руководителей, газета «Мегу Айастан» освещала решение ряда проблем, существовавших в образовательной сфере Арцаха в период их руководства.

Газета также высоко оценила роль отдельных благотворителей и деятелей культуры в решении проблем, возникающих в различных сферах образования Арцаха.

Ключевые слова и словосочетания: приходская школа, епархиальная школа, реальная школа, монастырь Амарас, Шуши, Гандзасарская монастырская школа, женская школа, периодическое издание, образование

The reflection of the educational life of Artsakh on the pages of the periodical "Meghu Hayastani" (the second half of the 19th century)

Harutyunyan Marine G.

Candidate of Historical Sciences, Senior Researcher, Institute of History NAS RA (Yerevan, RA)

Annotation. Summarizing our scientific study, we would like to emphasize that "Meghu Hayastani" periodical presented interesting information about the school of Amaras monastery, spiritual scientists of the monastery. It thoroughly covered the activities of Mariamian and Diocesan schools of Shushi. The periodical mentioned generally the activities of Artsakh diocesan, church parish, male, female, one-class, two-class, two-sex schools and valued their role in the process of development of Armenian educational and cultural life.

Emphasizing the activities of individual supervisors, the "Meghu Hayastani" periodical presented about the settlement of a number of problems existing in the educational spheres of Artsakh during their leadership.

The newspaper also valued the role of individual philanthropists and cultural figures in the settlement of problems arising in various educational fields of Artsakh.

Keywords & phrases: Parish School, Diocesan School, Realakan School, Amaras Monastery, Shushi, Gandzasar Monastic School, Girls' School, periodical, education

Ազգային ինքնության պահպանման կարևորագույն երաշխիքներից է հայ ժողովրդի դարավոր կրթության գոյությունը: Հայկական կրթական կյանքի զարգացման միտումներ նկատվեցին հատկապես 19-րդ դարի երկրորդ կեսից: Այս հանագամանքը պայմանավորված է նրանով, որ 19-րդ դարի 50-60-ական թթ. Ռուսաստանում և Անդրկովկասում ծավալված

հասարակական-քաղաքական և մանկավարժական շարժումն իր բարերար ազդեցությունն է թողել նաև Հայաստանում, որտեղ ևս սկսել են զարգանալ հայ դպրոցն ու մանկավարժական միտքը: Գործող հայկական հոգևոր դպրոցների կողքին բացվեցին նոր թեմական [13, էջեր 1-3], եկեղեցական-ծխական [30, էջեր 370-371] դպրոցներ: Արցախում հետզհետե սկսեցին

բացվել արական, իգական, միդասյա, երկդասյա, երկսեռ դպրոցներ [14, էջ 88]: Հարկ է նշել, որ եկեղեցական - ծխական դպրոցները գտնվում էին ծխական համայնքների տնօրինության տակ, որոնք պահվում էին եկեղեցու եկամուտներով և նվիրատվություններով:

19-րդ դարի երկրորդ կեսին գործող դպրոցների շարքում էին Շուշու Թեմական հոգևոր դպրոցը (1838 թ.), Վարանդա գավառի Ամարաս վանքի դպրոցը (1857 թ.), Ավետարանոց (գործել էր 1873 թ.-ից), Աշան (գործել էր 1873 թ.-ից), Բայուջա (գործել էր 1873 թ.-ից) գյուղերի ծխական դպրոցները, Գանձասարի վանական դպրոցը (դպրոցը գործել էր 19-րդ դարի 20-30-ական թթ., այն կրկին բացվել էր 1857 թ.), Գիշի գյուղի ծխական դպրոցը (1888 թ.), Գյուլթաղ գյուղի ծխական դպրոցը (գործել էր 1873 թ.-ից), Ծարտար (1884 թ.), Դահրագ (գործել էր 1873 թ.-ից), Դաշրուլաղ (1888 թ.) գյուղերի ծխական դպրոցները, Երից Մանկանց վանքի (1860-ական թթ.), Թաղավարդ գյուղի արական ծխական (1884 թ.), Խաչմաչ (գործել էր 1873 թ.-ից), Խանապատ (1884 թ.), Խնուշինակ (1873 թ.), Նորշեն (1881 թ.), Նինգի (1890 թ.) գյուղերի ծխական դպրոցները, Շուշիի Հռիփսիմյան օրիորդաց միջնակարգ դպրոցը (բացվել էր 1876 թ.-ին՝ վարդապետ Արիստակես Մեղրակյանի ջանքերով), Շուշիի կույսերի մենաստանին (Կուսանաց Անապատին) կից ծխական դպրոցը (գործել էր 1873 թ.), Շուշիի Ագուլեցոց եկեղեցուն կից գործող ծխական դպրոցը, Շուշիի Մեղրեցոց Սուրբ Աստվածածին եկեղեցու արական դպրոցը (գործել էր 1873 թ.-ից), Շուշիի Գայանե Դանիելյանի երկսեռ դպրոցը (գործել էր 1873 թ.-ից), Ռեալական ուսումնարանը (1881 թ.), Շուշիի Մարիամ-Ղուկասյան օրիորդաց միջնակարգ դպրոցը, Շուշիի հայկական մասնավոր դպրոցները և այլն [9, էջեր 354-383]:

Լուսավորության տարածման գործում մեծ դեր խաղաց ժամանակի պարբերական մամուլը¹: 19-րդ դարի երկրորդ կեսին լույս տեսնող շատ պարբերականներ օբյեկտիվորեն լուսաբանում էին Արցախի կրթական կյանքի տարբեր ոլորտների խնդիրներ (կապված ուսուցման պրոցեսի, ուսումնական ծրագրերի, անհրաժեշտ առարկաների, դպրոցների նյութական և այլ խնդիրների հետ), տալիս համապատասխան գնահատականներ: Դրանց շարքում կարևորվում է «Մեղու Հայաստանի» պարբերականի դերը:

«Լուսավորության նպատակն ու գիտական նորությունը»

Արցախի 19-րդ դարի երկրորդ կեսի կրթական կյանքի տարբեր խնդիրներ լուսաբանվել են գիտության բնագավառի մի շարք ներկայացուցիչների կողմից [1; 2; 3; 4; 5; 6; 7; 8; 10; 11]: **Սակայն, ընդգծվող թեմայի հետազոտությունը՝** Արևելահայ պարբերական մամուլում գետնեղված նյութերի ուսումնասիրության տեսանկյունից հանգամանորեն չի դիտարկվել: **Ուստի մեր նպատակն է՝** Արևելահայ պարբերական մամուլում գետնեղված նյութերի հիման վրա հնարավորինս տալ մանրակրկիտ նկարագրություն՝ սույն ժամանակաշրջանի Արցախի տարբեր շրջաններում գործող դպրոցների նյութական դրության, կրթական ծրագրերի, հայտնի հոգևոր տեսույնների գործունեության, հայտնի մանկավարժների, աշակերտների թվաքանակի, գնահատման չափանիշների, ձեռքբերումների, որոշ թերությունների և այլ խնդիրների վերաբերյալ:

Ինչպես վերը նշեցինք ուսումնասիրվող թեմային անդրադարձել էր նաև 19-րդ դարի երկրորդ կեսին գործող Արևելահայ պարբերական մամուլը: Մեր ուսումնասիրության շրջանակների մեջ ներառել ենք հիմնականում «Մեղու Հայաստանի»² պարբերականում արտացոլված նյութերը, որոնք առնչվում են Արցախի կրթական ոլորտի տարբեր խնդիրներին:

Կցկտուր տեղեկություններ Ամարասի վանքի և Գանձակի դպրոցների վերաբերյալ:

Շաբաթաթերթում գետնեղված հետաքրքիր նյութերից մեկը վերաբերվում է Ամարասի վանքի դպրոցին: Վերջինս հիշատակում է վանքի դպրոցի գիտնական Ներսես վարդապետ Միրզա Ավագեանցի անունը և շուշեցի Գևորգ Ամբրոսյան բարերարին: Ըստ թերթի տեղեկության՝ 1858 թ. Գևորգ Ամբրոսյանը եկավ Ամարաս և իր սեփական նյութական միջոցներով մեծ օգնություն ցուցաբերեց վանքին ու դպրոցին. «Շուշի, 14 յունվարի, Ամարասայ վանից վանահայր և ուսուցիչ նոյն վանքի դպրոցի գիտնական Ներսես վարդապետն Միրզա Ավագեանց, ծանուցանում է, թե զկնի երկրորդ գիտի սուրբ նշխարաց սրբոյն Գրիգորիսի Աղուանից լուսաւորչի 'ի 23 սպրիլի 1858 ամի. սկիզբն եղև նորոգ շինութեան 'ի վերայ տապանի սրբոյն ջերմեռանդ ժողովրդականաց Դարաքաղու, թե քաղաքին Շուշուայ և թե գիղականաց: Պարոն Գևորգ Ամբրոսյանն Շուշուայ քաղաքացի եկաւ յԱմարաս 'ի 13 օգոստոսի նոյն ամի իւր սեպիական ծախքով, վերակացու լինելոյ սուրբ տանարի շինութեան վերայ, և տես-

¹ «Արարատ», «Հյուսիսափայլ», «Մեղու Հայաստանի», «Կռունկ հայոց աշխարհին», «Հայկական աշխարհ», «Մշակ», «Փորձ», «Գործ», «Արձագանք», «Նոր դար», «Ազգագրական հանդես», «Արարատ» և այլն:

² Հայկական քաղաքական, բանասիրական և առևտրային շաբաթաթերթ, որը 1873 թվականից հրատարակվել է որպես օրաթերթ: Լույս է տեսել 1858-1886 թթ. Թիֆլիս քաղաքում: Խմբագիրներ՝ Ս. Մանդինյան, Պ. Սիմոնյան (1863 թ.-ից):

ներով աշակերտաց յառաջադիմությունը՝ իբրև ազգասէր անձն հոգաց դպրոցի պակասությունք իւր սեպհական դրամովք՝ նորոգելով և զարդարելով վանքի հիւսիսային կողմի չորս մեծամեծ սենեակները, ուր աշակերտքը ուսանում են, նոցա գրասեղանները, ննջարանի համար մահնակալներ շինել տալով, և հացկերութեան համար սեղանատուն, պարզուեց թուղթ, գրիչ և զանազան գրեանք» [15, էջ 34]:

Ամարասի վանքի դպրոցի և Գևորգ Ամբրուսյանի բարեգործական աշխատանքների մասին հիշատակվում է նաև «Մեղու Հայաստանի» պարբերականի այլ համարում [16, էջ 274]: Ընդգծենք, որ շաբաթաթերթում զետեղված տեղեկությունները հիմնված են Ամարասի դպրավանքի վանահայր Ներսես վարդապետ Միրզա Ավագեանցի կողմից տրամադրված տեղեկությունների վրա (ի 12 օգոստոսի, 1859 թ., ՚ի Շուշի): Այն նշում է, որ 1859 թ. Ամարասի վանքի Սուրբ Գրիգորիսի դպրոցին Գևորգ Ամբրուսյանի կողմից տրվել է մեծ օգնություն [16, էջ 274]:

«Մեղու Հայաստանի» պարբերականը հիշատակում է նաև Գանձակի (Հյուսիսային Արցախ) հոգևոր ազգային դպրոցի մասին: Վերջինիս բացման գործում կարևորվում է Մատթեոս կաթողիկոսի դերը: Գանձակի հոգևոր ազգային դպրոցից գրում են. «Երբ որ հանգուցեալ Մատթեոս կաթողիկոսի շնորհով համարեալ ամեն հայաբնակ քաղաքներում և շատ գիւղերում ազգային հոգևոր դպրոցներ բացուեցան, 1862 թուին իմ վիճակս ընկաւ Գանձակ քաղաքը: Ինձ էնտեղ շատ սիրով ընդունեց ժողովուրդը, ինձ նշանակեցին բնակվելու տեղ սուրբ Յովհաննէս եկեղեցու բակումը երեք ընդարձակ, հոյակապ, զեղեցիկ սենեակներ...ինձ համար ընտրեցին ուսուցիչներ հայոց, ռուսաց լեզուի, սրբազան պատմութեան, թուաբանութեան, պատմութեան, վայալագրութեան, երգեցողութեան Գանձակի հոգևոր ազգային դպրոց» [27, էջ 138]:

Շուշիի Մարիամյան օրիորդաց դպրոցը:

19-րդ դարի երկրորդ կեսին հայկական կրթական կյանքի զարգացման գործում կարևոր ուշադրություն էր դարձվել աղջիկների կրթության բարելավման հանգամանքի վրա: Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններում թեմական [13, էջեր 1-3], եկեղեցական ծխական [28, էջեր 378-379] դպրոցներին զուգահեռ, սկսեցին բացվել նաև օրիորդաց դպրոցներ:

«Մեղու Հայաստանի» պարբերականը հանգամանորեն անդրադառնում է հատկապես Շուշիի Մարիամյան օրիորդաց դպրոցի [10] գործունեությանը: Արցախում հայ աղջիկների կրթության և դաստիարակության գործում պարբերականը կարևորում է Մարիամ Հախումյանի դերը [36, էջ 2]: Այս մասին թերթը գրում է.

«Հանգուցեալ տիկին Մարիամ Հախումեանը՝ քնքոյշ և սիրող մայրն է Ղարաբաղու մանուկների. նա առաջին հիմնադիրն է օրիորդական դպրոցի Շուշի քաղաքում: Վայթունական թուականներին երիտասարդ և եռանդուն տիկինը տեսնելով շուշեցի օրիորդների մտաւոր թշուառութիւնը և հասարակութեան անտարբերութիւնը դէպի կանանց կրթութեան գործը, տնէ տուն ընկած սկսեց անխոնջ քարոզել քաղաքում օրիորդական դպրոց բանալու միտքը Տիկին Հախումեանը առանց յայտադելու, օրինաւոր թոյլտւթիւն ստանալով Մատթեոս Կաթողիկոսից բացաւ իւր սեպհական տանը, իւր սեպհական ծախքով առաջին օրիորդական դպրոցը Շուշում: Առաջին օրը դպրոցում նստած էին քսանից աւելի աշակերտուհիներ և հետզհետէ այնքան աւելացաւ նոցա թիւը, որ հնար չէր լինում ընդունելը...» [36, էջ 2]: Այս դպրոցում են դասավանդել հայ մշակույթի անվանի ներկայացուցիչները՝ Պ. Շանշյանը, Պ. Պռոշյանը, Ստ. Ներսիսյանը, Գարեգին Մուրադյանը (Մերքիսեդեկ Սրբազան) և այլոք [36, էջ 2]:

Արցախի օրիորդաց դպրոցի բացման վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ կան պարբերականի այլ համարներում: Այդ համարներից մեկը գրում է. «Առանց իզական սեռի կրթութեան ազգի կրթութիւնը և յառաջադիմութիւնը քարոյսալեւ աներևակայելի բան է: Այս հիման վերայ սիսա Ղարաբաղու մեր յարգոյ հայրենակիցները ներկայ տարոյս մէջ. Սուրբ Վարդանանց տօնի օրը 27-ին փետրվարի առաջարկել են ՚ի հաստատութիւն իրանց առաջնորդին, ուսումնասէր և արժանապարզ սրբազան Ստեփաննոս Արքեպիսկոպոսին, օրիորդաց դպրոցի կանոնադրութիւնը: Նորին սրբազանութիւնը ուրախութեամբ մեծաւ ընդունելով նոցա այս խնդիրը, օրինել է գործը և մեծի պահոց սկզբումը պէտք է բացվէր յիշեալ օրիորդաց դպրոցը, որն կոչվում է «Ղարաբաղու Սուրբ Մարիամայ օրիորդաց դպրոց»: Մի քանի յարգոյ և ազնուագարմ տիկիներ իրանց վերայ են առել հոգաբարձութեան պաշտօնը և հոգար յիշեալ դպրոցի համար » [19, էջ 91]:

Ուշագրավ է Մարիամ Հախումյանի՝ Սրբազանին գրած նամակ-խնդրանքի մասին տեղեկությունը: Այս մասին պարբերականը գրում է. «Գիտելով ձեր սէրը դէպի ազգային լուսատրութիւնը և հաստատ լինելով, որ ամէն մի ազգային գործ վերաբերեալ ազգի լուսատրութեանը ցանկալի է Ձերդ բարձր Սրբազնութեան ազգասէր սրտին, ես Շուշուայ քաղաքի տիկնաց կողմից դիմում եմ Ձեզ և խնդրում եմ խոնարհաբար տալ մեզ հրաման բանալու օրիորդաց համար Սուրբ Մարիամու անունով ուսումնարան և

³ Տիկին Մարիամ Հախումյանը մահացել է 1885 թ. հուլիսի 19-ին Գանձակում: Նրա մարմինն ամփոփված է Արցախի Շուշի քաղաքի Մեղրեցոց եկեղեցու գավթում: Տե՛ս [36]:

արժանացնել ընդունել ուսումնարանը Ձերդ արքա-
զանության բարձր հովանավորության ներքո
Յանձնելով մեզ Ձերդ բարձր արքազանության
օրհնությանը, մնամ խոնարհ դուստր Ձեր
Մարիամ Հախումեանց (Շուշի 27-ին, փետրվար,
1864 ամի)» [20, էջ 116]:

Պարբերականի այլ համարում նշվում է նաև
Ստեփանոս արքեպիսկոպոսի՝ Մարիամ
Հախումյանին ուղղված պատասխան նամակի
մասին՝ կապված Արցախի օրհորդաց դպրոցի
որոշ խնդիրների կարգավորման հետ.
«Գերագուևի տիկին Մարիամ Հախումեանց
Ըստ գրության Ձերում առ մեզ 'ի 1 ամսոյ ուրախ
հոգւով առաքեմ առ Ձեզ ընդ ամին 998 ռուբլի և
գ25 կոպէկ վասն 1865 ներկայ ամի, յորոց 30 ռուբ
'ի նուէր տարեկան յօգուտ դպրոցիդ օրհորդաց
Շուշւոյ Արցախայ, 30 ռուբ 'ի թոշակ երկուց
Սանուհեաց ինոց, իսկ 38 ռուբ. և 25 կոպ 'ի գին
հանդերձից նոցա և պատրաստ եմ 'ի կեանս իմ ուր
և իցեմ այսպիսեօք և առաւել քան զայս ի ղէպս
կարևորության հովանավորել դպրոցին որպէս և
իմս իբրև այնորիկ միայն զմայրական հովա-
նավորության Ձեր զաշակերտուհեօք ոչ խնայել
խնդրեմ ցորչափ հոգեկան, ոչ այլ անձնական
կարողութիւն Ձեր խոստանայ Ձեզ, զի դուք էք և
դուք լինելոց էք մայր օրհորդաց Հայաստանին:
Խնդրեմ ընդունել զողջոյն իմ ընդ միւս բարե-
պաշտուևի Հոգաբարձուհեաց աշակերտուհեաց,
որոց վասն մնամ առ Աստուած բարեմաղթ:
Ստեփանոս Արքեպիսկոպոս, 31 մայիսի, 1865
ամի, յԵրեւան» [26, էջ 198]:

«Մեղու Հայաստանի» պարբերականն
անդրադարձել է նաև օրհորդաց դպրոցի
կանոնադրության տպագրության հետ առնչվող
որոշ խնդիրներին: Թերթում գետեղվել է
Արցախի Հայոց թեմի վիճակավոր առաջնորդ
Ստեփանոս արքեպիսկոպոսի համառոտ
հոդվածը՝ օրհորդաց դպրոցի կանոնադրության
տպագրության մասին. «Մէք 'ի սեպիականու-
թենէ մերմէ 'ի զանազան նիւթոց ծախեալ ենք գ23
ռուբլի գ45 կոպ. արծ. յաղագս տպագրելոյ
զկանոնադրութիւնս և զտետրակս Հոգևոր Դպրոցի
օրհորդաց Արցախայ և 'ի վարձ տպագրութեան
Մինասայ Դառողիճեանց տուեալ ենք զերեսուն
ռուբլիս, և զայս գումար թէև աննշան ընծայեմ
յիշեալ դպրոցին, զորոյ զցուցակն 'ի միասին ընդ
ամին առաքեալ 'ի տես և 'ի տեղեկութիւն բարե-
պաշտուևի վերատեսուչւոյդ նոյն դպրոցին խնդրեմ
ընդունել զայն 'ի յարգանս: Ի 31 յուլեաի 1864 ամի,
'ի Շուշի: Վիանակաւոր Առաջնորդ Հայոց թեմին
Արցախայ Ստեփանոս Արքեպիսկոպոս» [26, էջ
197]:

Պարբերականի 1864 թ. համարներից մեկը
համառոտ նկարագրում է Շուշիի Մարիամյան
օրհորդաց դպրոցի բացման արարողության
մասին. «Մենք քանիցս անգամ միջոց ենք ունեցել
խօսելու Շուշուայ նորակառոյց օրհորդաց Սուրբ

Մարիամայ դպրոցի մասին, որի բացումն արդէն
Սուրբ Աւետեաց օրը փառաւոր հանդէտով եղել է և
դասատուութիւնը միւս օրն իսկ սկսվել է: Այս
պատճառով այնտեղ տպագրած է մի փոքրիկ
տետրակ էլ, որ պարունակում է իր մէջ այն բացման
հանդէսի նկարագրութիւնը: Հանդէսի ժամանակ
հոգևոր ուսումնարանի աշակերտներից մէկը՝ Հայկ
Խաչատրեանցը, կարդացել է մի ազդու գեղեցիկ ու
հասուն մտքերով լի ճառ, որն որ սհա հարդորում
ենք մեր յարգոյ ընթերցողներին էլ: Ընծայա-
բերութիւններից և ոգևորութիւններից երևում է, որ
Ղարաբաղի թէ՛ տղամարդոց և թէ՛ կանաց մէջ
եռանդը այս ուսումնարանի համար շատ մեծ է: Այս
եռանդը յոյս է տալիս մեզ, որ այն ուսումնարանը
հաստատութիւն կ'ունենայ Ղարաբաղի մէջ և
օգուտ կ'բերէ հասարակութեանը, ինչպէս Թիֆլիզի
մէջ Բէթղեմիէմի Սուրբ Մարիամայ ուսումնարանը,
որն որ արդէն բաւական մեծ համակրութիւն է
գտած տեղւոյս հայ հասարակութեան անդամների
մէջ, համակրութիւն, որն որ ուսումնարանի հաս-
տատութեան ամէնից լաւ երաշխատուն է» [21, էջ
189]:

Շուշիի Մարիամյան օրհորդաց դպրոցի
բացման արարողության ժամանակ Հայկ
Խաչատրյանցի կարդացած գեղեցիկ ճառի,
Արցախի հոգևոր դպրոցի, 1863 թ. Պետրոս
Շանշյանի (Շանշյանց)⁴, Արցախի թեմական
առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոսի
վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ
հանդիպում ենք Ալեքսանդր Մանուշարյանցի
հոդվածում (Շուշի, 1864 թ.) [23, էջեր 219-220]:
Նույն հոդվածագիրը Պ. Շանշյանի մասին նշում
է. «Պ. Շանշեանցը դէկտեմբերի մէկից տալով
Ղարաբաղու ուսումնարանին նոր ընթացք,
հեռացրուց ֆիզիքական պատիժները և հին
սաստիկ խստութիւնները, որոնք այսպէսպէս էին
ուսուցչի պատկերը, և փոխեց այս պատիժները
մտաց հեզ կառավարութեան. երեխայքը առ
հասարակ սիրում են որ մեծերն նրանց հետ խօսին,
մտածեն, դատեն և էս բանը նրանց միտքն բանում է
և շատ աշխուժացնում, որովհետև նրանց աւելի
ուղղում է բարոյական միջոցները, քան թէ
ֆիզիքական խստութիւնը...» [23, էջ 219]:

Արցախում Մարիամյան դպրոցի բացման
առթիվ իր կարծիքն է հայտնել Կովկասյան
երկրների փոխարքայուհին, որի մասին «Մեղու

⁴ Խոսքը վերաբերվում է Պետրոս Շանշյանին՝ Արցախի
դպրոցներից մեկում տեսչության պաշտոնի նշանակման
առաջարկությանը: Վերջինս այդ ժամանակ գտնվում է
Սանկտ Պետերբուրգում: 1863թ. Ապիլի թեմական դպրոցի
տեսուչ է նշանակվում Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում
տարիներ առաջ հռչակված Պետրոս Շանշյանը: Վերջինիս
օգնականն եղել է Պերճ Պռոշյանը, ով այնտեղ դասա-
վանդել է հայոց լեզու, հայ գրականություն և ազգային
պատմություն: Պ. Շանշյանի մանկավարժական հայացք-
ների մասին մանրամասն տե՛ս [12] Պետրոս Շանշյանի
մասին տե՛ս նաև [38, էջ 749]:

«Հայաստանի» պարբերականը գրում է. «Կովկասեան երկրների գթառատ մայրը՝ մեծ իշխանուհի՝ Փոխարքայուհին, ինչպէս գրում են մեզ Շուշից, իր շնորհակարտութիւնն է յայանել արժանապարզ տիկին Մարիամ Հախումեանցին, այնտեղի օրիորդաց դպրոցի հոգաբարձութիւնը յանձն առնելու ու նորա մասին հոգս քաշելու համար և խոստացել է օգնել: Այս պարզ սպասոյց է Նորին Բարձրութեան մայրական գթոյ տեղոյս իզական սեռի վերայ, որի կրօնութիւնը բնականապէս քաղցր պէտք լինի նորա ազնիւ սրտին» [25, էջ 363]:

Ուշագրավ է թերթում գետնոված գրառումը՝ Օրիորդաց դպրոցում արհեստագիտական մասնագիտական հատուկ դասարանի բացման մասին. «Շուշից գրում են, որ սրբ. Սագինեանցի ձեռներեցութեամբ տեղական օրիորդական դպրոցում արհեստագիտական մասնագիտական դասարան է հիմնարկուել» [35, էջ 4]:

«Մեղու Հայաստանի» պարբերականը հիշատակում է Ղարաբաղի առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոսի՝ Արցախի լուսավորության և կրթության գործում ունեցած մեծ դերի մասին. «...Նորին Սրբազանութիւնը առաջարկեց 400 մանեթ Ղարաբաղու ուսումնարանին և 100 մանեթ համբարին նուիրել, և երբ Ղարաբաղցիք չկամէին ընդունել, նա աղաչանօք ասաց. ձեր ջրնդունելը նշանակում է մոռացնել ինձ Ղարաբաղու ժողովրդեան և ուսումնարանը» [24, էջ 267]: Արցախցիները ի պատասխան Սրբազանին հավելեցին. «Ո՛հ, ո՛հ, Ղարաբաղը ձեզ չի մոռացել, ուսումնարանը երախտապարտ է ձեզ, այս ձեզ շրջապատող մատաղ մանկունքը, սպազայունը փառք և պարծանք են ձեր անուանը, ասացին ամէնքը և վերցրին գումարը» [24, էջ 267]:

Արցախի առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոսի լուսավորական աշխատանքի մասին է հիշատակվում նաև թերթի 1864 թ. մեկ այլ համարում [22, էջ 212]:

«Մեղու Հայաստանի» պարբերականը հանգամանորեն ներկայացնելով Արցախի հոգևոր առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոսի Շուշից հեռանալը [24, էջ 266], նշում է նաև արցախցիների՝ Ստեփանոս արքեպիսկոպոսի նկատմամբ ունեցած դրական վերաբերմունքի մասին [24, էջեր 267-268]:

Որոշ տեղեկություններ Շուշիի ազգային հոգևոր դպրոցի վերաբերյալ:

Թերթը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում նաև Շուշիի ազգային հոգևոր դպրոցի [8] նախկին կարգավիճակի և նոր վայրի՝ մետրոպոլիտի առաջնորդարան տեղափոխման մասին. «Շուշույ ազգային հոգևոր դպրոցը, որն որ մինչև ցայժմ ունէր մի անյարմարութիւն, այն ևս նորերումս վերացել է: Այս անյարմարութիւնը այն է եղել, որ չէ ունացել յարմար շինուածք իր տեղաւորութեան համար. իսկ եթէ շինելու լինէին նոր տուն սորա համար, մեծամեծ ծախսեր պէտք է

լինէին: Ուստի և մինչև ցայժմ՝ զանազան շինութեանց մէջ թափառելից յետ, տեղափոխվել է այժմ հանգուցեալ Մետրապոլիտի առաջնորդարանը, որն որ նուիրած էր Գանձասար վանքին և որն որ շատ յարմար է դպրոցի տեղաւորութեան համար, թե՛ իր դիրքով և թե՛ իր ընդարձակութեամբ» [25, էջ 363]:

Թերթի համարներից մեկը՝ [31, էջ 118] Արցախի ազգային հոգևոր դպրոցի (թեմական) նյութական կարգավիճակը 1871-ական թվականների դրությամբ գնահատում է կայուն. «Շուշույ ազգային հոգևոր դպրոցը Հայոց կարելի է ասել մեր դպրոցների մէջ ամենից ամէնի սպառնալից դպրոցներից է իր նիւթական կողմանէ՝ ունենալով թէ գումար և թէ մեծ կայքեր ու արգեանց աղբիւրներ, որոնք լաւ կառավարութեամբ կարող էին տալ ազգին օգտաւէտ պտուղներ» [31, էջ 118]: Թերթը ընդգծում է, որ այդ դպրոցի ապագան ապահովված է հասույթներով [32, էջ 166]: Ներկայացվում է նաև ազգային հոգևոր դպրոցում դասավանդվող առարկաների և դրանց թերությունների վերաբերյալ որոշ տեղեկություններ [33, էջեր 312-313; 34, էջեր 159- 160]:

Արցախի կրթական կյանքի զարգացման գործում կարևորվում է «Շուշիի հայոց հասարակաց ընթերցարանի» [17, էջ 331] դերը (1838 թ.): Ընթերցարանի բազմաբովանդակ գրքերով են կրթվել և դաստիարակվել շատ սերունդներ:

«Մեղու Հայաստանի» պարբերականն՝ Արցախի դպրոցների գործունեության պահպանման գործում բարձր է գնահատում հայ բարերարների դերը: Թերթը նշում է արցախցի Սաղաթել Յուզբաշյանցու կտակի մասին, որը նախատեսված է հետագայում հոգալու ոչ միայն արցախահայության, այլև օտար երկրներում գործող հայկական համայնքների հասարակական և սոցիալական խնդիրների լուծման համար [18, էջ 110]:

Պարբերականը նաև անդրադարձել է Արցախի կրթամշակութային կյանքի զարգացման գործում մեծ դեր կատարած առանձին անհատներին: Այն իր տարբեր համարներում կարևորում է Խորեն Ստեփանեի [29, էջեր 353-355; 39, էջ 225] և նրա խմբագրած «Հայկական աշխարհ» պարբերականի դերը հայկական կրթամշակութային կյանքի տարբեր խնդիրների լուսաբանման գործում:

Արցախի գիտակրթական կյանքում կարևորվում է տարբեր վանքերում և եկեղեցիներում գրված ձեռագիր մատյանների (գրված տարբեր դարաբաշխներում) դերը: Այս ձեռագրերի մասին թերթը գրում է. «Տէր Համազասպ քահանան ժամանակաւ Արցախի վանքերից և գյուղերից հաւաքած է ունեցել այլ և այլ ձեռագիր տետրակներ և մատեաններ, որոնք ուղարկել է Էջմիածնի գրադարանին: Նորին Վեհափառութիւնը հանգուցեալ, Գէորգ Դ. կոնդակաւ յ3-ն հոկ-

տեսքերի 1880 ամի N 429 օրհնել և գոհունակությամբ է յայտնել Համագասաք քահանային» [37, էջ 2]:

Այսպիսով «Մեղու Հայաստանի» պարբերականը լուսաբանելով Արցախի կրթական կյանքի տարբեր խնդիրներ՝ հիմնականում անդրադարձել է Շուշիի Մարիամյան և Թեմական դպրոցների գործունեությանը, առանձին տեսուչների ուսումնական ծրագրերին, մանկավարժական հայացքներին և դրանց հետ առնչվող այլ հարցերին: Թերթում զետեղվել են շատ քիչ տեղեկություններ Ամարասի վանքի և Գանձակի դպրոցների վերաբերյալ:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Ավագյան Ս.**, Ղարաբաղի մամուլի պատմություն: - Երևան, 1989:
2. **Ավանեսյան Ա., Հարությունյան Գ.**, Արցախի կրթական համակարգը, Ստեփանակերտ, 2014 և այլն:
3. **Բարխուդարեանց Մ.**, Արցախ: - Երևան, 1996:
4. **Բալայան Վ.**, Արցախի պատմություն: - Երևան, 2002:
5. **Գրիգորյան Հ., Հարությունյան Գ.**, Շուշիի Ռեալականը: - Երևան, 2001:
6. **Երկանյան Վ.**, Հայկական մշակույթը 1800-1917 թթ.: - Երևան, 1982:
7. **Լեո**, Երեսնամյակ հայոց բարեգործական ընկերության Կովկասում: - Թիֆլիս, 1911:
8. **Լեո**, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի (1838-1913 թթ.): - Թիֆլիս, 1914:
9. **Խուրդյան Ս.**, Արևելահայ դպրոցները 1830-1920 թթ.: - Երևան, 1987:
10. Ղարաբաղու Տիրամայր Սուրբ Մարիամու օրիորդաց ուսումնարանի բացվելը: - Շուշի, 1864:
11. **Հարությունյան Մ.**, Մշակութային կյանքը Լեռնային Ղարաբաղում (Արցախում) 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին: - Ստեփանակերտ, 2010:
12. **Հարությունյան Մ.**, Պետրոս Ծանշյանի մանկավարժական հայացքները: // «Դպրատուն», Գիտական հոդվածների ժողովածու, 2016, N 1 (4), էջ 88-94:
13. «Արձագանք», 1890, N 21:
14. «Արձագանք», 1889, N 6:
15. «Մեղու Հայաստանի», 1859, N 5, հունվարի 31:
16. «Մեղու Հայաստանի», 1859, N 35, օգոստոսի 29:
17. «Մեղու Հայաստանի», 1860, N 42, հոկտեմբերի 15:
18. «Մեղու Հայաստանի», 1863, N 11, ապրիլի 20:
19. «Մեղու Հայաստանի», 1864, N 11, մարտի 14:
20. «Մեղու Հայաստանի», 1864, N 14, ապրիլի 4:
21. «Մեղու Հայաստանի», 1864, N 24, հունիսի 20:
22. «Մեղու Հայաստանի», 1864, N 27, հուլիսի 11:
23. «Մեղու Հայաստանի», 1864, N 28, հուլիսի 18:
24. «Մեղու Հայաստանի», 1864, N 34, օգոստոսի 30:
25. «Մեղու Հայաստանի», 1864, N 46, նոյեմբերի 21:
26. «Մեղու Հայաստանի», 1865, N 25, հուլիսի 10:
27. «Մեղու Հայաստանի», 1867, N 18, մայիսի 20:
28. «Մեղու Հայաստանի», 1868, N 49, դեկտեմբերի 14:
29. «Մեղու Հայաստանի», 1869, N 45, նոյեմբերի 22:
30. «Մեղու Հայաստանի», 1869, N 47, դեկտեմբերի 6:
31. «Մեղու Հայաստանի», 1871, N 16, մայիսի 1:
32. «Մեղու Հայաստանի», 1871, N 21, հունիսի 5:
33. «Մեղու Հայաստանի», 1871, N 40, հոկտեմբերի 30:
34. «Մեղու Հայաստանի», 1872, N 40, 2 դեկտեմբերի:
35. «Մեղու Հայաստանի», 1884, N 90, 18 նոյեմբերի:
36. «Մեղու Հայաստանի», 1885, N 63, 15 օգոստոսի:
37. «Մեղու Հայաստանի», 1885, N 70:
38. «Տարազ», 1891, N 50:
39. «Տարազ», 1895, N 15:

Сдана/Հանձնվել է՝ 03.06.2024

Рецензирвана/Գրախոսվել է՝ 10.06.2024

Принята/Ընդունվել է՝ 17.06.2024